

ԶԵՅԹՈՒՆԻ ՆԵՐԿԱՑԻՑ

ԶԵՅԹՈՒՆը դեռ ևս ապրում է նահապետական-ազնուապետական դրութեամբ:

Այստեղ գոյութիւն ունեն տակաւին բազմանդամ գերդաստաններ, ինչպիսիք են ԵՀՆԻ-Տիւնեանների, Սուրէնեանների և այլ գերդաստանները, որոնցից իւրաքանչիւրը բաղկանում է 50—60 ընտանիքից և մօտաւորապէս 120—150 կարիճ և զէնք գործածող տղամարդերից, որոնց առաջնորդ և գլխաւոր են նահապետները կամ տոհմային իշխանները:

ԶԵՅԹՈՒՆի չորս թաղերն ունեն առանձին նահապետներ, որոնց զէյթունցինները անուանում են իշխան: Իւրաքանչիւր թաղի մէջ կայ մի բազմանձիւղ գերդաստան, որ նկատում է իրեն տոհմային ազնուական և որի գլխաւոր մնադամները ժողովրդի կողմից վայելում են յարգանք, իրրե երկրի մեծաւորներ: Սոյն գերդաստանների գլխաւոր անդամններից միայն նրանք, որ ունեն յայտնի արժանաւորութիւն և ձիթքեր, ժառանգաբար ընտրում են իշխան կամ նահապետ: Իշխանները, բացի փարչական ընդունակութիւններից, անպայման կերպով պէտք է ունենան և պատերազմական ձիթքեր: Իշխանները պարտաւոր են մտածել և հոգս տանել ժողովրդի բարեկեցութեան մասին, իշխանների իրաւասութիւնն է՝ կարգադրել և տնօրինել ժողովրդային բոլոր գործերը—վէճներ, զանազան դատեր, հասարակական, ամուսնական և այլ իննդիրներ: Իւրաքանչիւր թաղի իշխան կարող է միջամտել միայն իր թաղի գործերին, իսկ հանրային խնդիրների կարգադրութեան գործում հաւաքւում են չորս իշխանները իրանց երկրորդականների հետ միասին և ընդհանուրի համաձայնութեամբ սահմանում են որոշումներն ու գործերի ընթացքը:

Աւանդական յայտնի սովորութիւնների համաձայն ինաւմութեան կամ ընտանեկան կապեր հաստատւում են միայն

տոհմային գերդաստանական ճիւղերի մէջ։ Հաղուադէպ է առ մուսնական կապ հաստատուած տեսնել տոհմային և հասարակ ընտանիքների մէջ։

Սոյն հասարակական կարգերն ու ներքին սովորութիւնները խորապէս արմատացած են ժողովրդի մէջ, որ և մինչև մի յայտնի աստիճանի ապացոյց են, թէ գրանք գոյութիւն ունեն հին ժամանակներից ի վեր։ Այդ ազնուական գերդաստանների անդամները, առհասարակ, առոյգ և վայելակաղմ են և ունեն մի տեսակ ասպետական ոգի։ Վերջին ժամանակներս, սակայն, նկատուում է ինչ-որ փոփոխութիւն այդ աւանդական բարքերի ու սովորութիւնների մէջ՝ մասսամբ Զէյթունն իր նախկին սահմանափակ վիճակից ենիւրու պատճառով, որով նա սկսել է շփուել շրջակայ գաւառների բնակիչների հետ, մասսամբ էլ թիւրքական կառավարութեան մասնակի ջանքերի չնորհով, որի նպատակն է խախտել զէյթունցի հայի այդ մեկուսացած ազնուապետական դրութիւնը։ Կան թաղեր, որոնք վերջին տարիներս կառավարուում են հասարակ և ոչ-ազնուական գերդաստաններից առաջացած հարուստ աղաների, էֆէնդիների և կամ կղերականների ձեռքով։ Այսպէս են Բօշ-Բայիր և Սուրէնեան թաղերը։

Երկու կամ երեք դար ասած, երբ Զէյթունը վայելում էր համեմատաբար անկախ վիճակ, երկրագործութիւն ու տեղական արհեստաները մի յայտնի աստիճանի նախանձելի վիճակ ունէին, քան այժմ։ Թէ պատմութիւնը, թէ աւանդութիւններն ու մագաղաթէ յիշատակարանները, որոնք գտնուում են այժմ վանքերի անկիւնները, արձանագրուում են, թէ բացի բազմաթիւ խաղողի այգիներից, որ տեղական երկրագործութեան մէջ առաջնակարգ տեղն էր գրաւում, Զէյթունը արտադրում էր նաև որոշ քանակութեամբ ցորեն, գարի և այլ և այլ հացարոյսեր, նոյնպէս և պաղատու ծառեր, ինչպէս՝ ձիթենի, թղենի, նունենի, ընկուզենի և այլն։ Ժողովրդի մէջ ընդհանրացած և ծաղկած արհեստաներն էին։—Երկաթագործութիւն, վառողագործութիւն, շերամաբուծութիւն, ապայագործութիւն, ջորեպանութիւն և այլն։ Սակայն այն ժամանակից, երբ սկսել է աւելի սուր կերպարանք ստանալ գոյութեան և ինքնապաշտպանութեան կոփուը՝ իր շուրջը ծնունդ առած զէրէքէկիների և արտաքին թշնամիների գէմ, զէյթունցին հետզհետէ, երկար տարիների ընթացքում, կորդյուում է իր քաղաքացիական յայտնի ձիթերն և ընդունակութիւնները, մի կողմ են թողնուում երկրագործութիւնն ու արհեստաները, ինչպէս և իր ժամանակի համընթաց՝ տեղական կրօնական միաբանութիւնն ու վանքերում աւանդուած

գպրական կրթութիւնը: Այդ ժամանակներից սկսած՝ զէլթունցիների կեանքը ընդգծուեց աւելի սահմանափակ շրջանում, հետըզնետէ ստանալով լեռնաբնակներին յատուկ մնկուսացած, սակաւակեաց, կիսավայրենի մի բնաւորութիւն: Այս ամենի որպէս ապացոյց կարող են լինել բացի երկու-երեք դար առաջ Զէլթունում գտնուած նշանաւոր վանքերն ու ծաղկած միաբանութիւնները, այլ նաև Զէլթունից ու գլխաւոր գիւղերից մի քանի ժամ հետի գետահովիտների մէջ անխնամ թողուած ընդարձակ այգիները, որոնք երկարու պատերազմների չնորհով զրկուած լինելով ինամող ու մշակող ձեռքերից, աւելի վերջ դարձել են վայրի, անպտուղ որդատունկեր: Նմանապէս բազմաթիւ վայրի ձիթենիներ, թղենիներ, հունիներ, որոնք առաջները լինելով պտղատու ծառեր՝ արշաւանք գործող թշնամիների կողմից կտրուած, նորից բռուած և թողուած են անխնամ վայրենի: Իսկ վերջին տարիներում բոլոր ծառերը կտրուեցին թուրքական բանակի կողմից՝ զինուորներին իրեւ վառելու նիւթ:

Ներկայումս Զէլթունը չունի իր կենսական պէտքերի և ապրուստի համապատասխան բաւականաչափ վարելահող կամ արդիւնաբերութիւն. իսկ վաճառականութիւնն ու արհեստները բոլորովին ընկած են: Եւ սակայն զէլթունցիները սովորութիւն չունեն պանդիտել և կամ դաշտային նահանգները աշխատելու գնալ, ինչպէս այդ անում են Հաճնի բնակիչները՝ տարուայ յայտնի եղանակների մէջ Աղանայի դաշտերը գաղթելով:

Այժմ զէլթունցիների ապրուստի գլխաւոր միջոցներն են՝ փոքր վաճառականութիւն շրջակայ գիւղերի հետ, այգեգործութիւն և զանազան տեղական մանր արհեստներ: Զէլթունցիները, առհասարակ, առաւել կամ նուազ ընդարձակութեամբ ունեն խաղողի այգիներ, որոնցով հայթայթում են կեանքի անհրաժեշտ պէտքերը: Միայն Զէլթունում կան մօտ 2500 այգի, իսկ ամբողջ գաւառում մօտաւորապէս 7—8000: Այգիները գտնուում են Զէլթունի հարաւարեկելեան և հարաւարեկմտեան կողմերը՝ գետակի երկու եղերքների ընդարձակ ձորահովտի մէջ: Խաղողը, բուսը կամ չամիչը դրաստներով փոխադրում են Ալբիստանի և Կովկասնի թիւղքական գիւղերը՝ փոխանակելու ցորենի, գարու և այլ հացարոյսերի հետ, և կամ երբեմն էլ թիւղք գիւղացիները Զէլթուն են բերում իրանց հացարոյսերը՝ փոխանակելու համար չամիչի հետ: Այս պարագան կախուած է լինում տարուայ մէջ փոխանակելի բերքերի առաւել կամ նուազ առատութիւնից: Խաղողից պատրաստում են րուպ և մի քանի տեսակ անուշներ: Զէլթունի խաղողը մինչև տասն և հինգ տեսակի է հասնում և նշանաւոր է շրջակայ գաւառների մէջ:

Զրկուած արուեստական խնամքներից, սակայն չնորհով բարեւթեր հողի և յարմար կլիմայի նրանք քաղցր են և իրանց տեսակի մէջ ընտիր Խաղողի ընդհանրապէս և տեսակից պատրաստում են մեծ քանակութեամբ չամիչ, իսկ ջրալից տեսակներից գինի և օղի: 8—10 տարի սրանից առաջ, երբ գեռ և ֆրանսիայում հաստատուած չէր ժամանակակից մաքսային դրութիւնը, մասնաւոր վաճառականներ մեծաքանակ չամիչ էին արտահանում Մարսէլ, և այդ պատճառով չամիչի արժէքը անհամեմատ աւելի բարձր էր:

Քաղաքի արևելեան կողմը Յ մղոն հեռի, տարածում է բաւական ընդարձակ մի գաշտագետին՝ Խիջա-Խազը անունով, որ ձգուում է մինչև Զիհանի եղերքը և պատկանում է Բօշ-Բայիրի և Վերի-Թաղի մի քանի աղաներին: Ցորենի մշակութեան համար այս փոքրիկ գաշտը միայն ունի Զէյթունը: Դաշտի մէջ-տեղը բջիւում են ծծմբային երկու տաք աղբիւներ, ուր հեռաւոր վայրերից հիւանդներ են այցելում բժշկութեան համար: Եազդ-ի հարաւային մասը՝ Ալաբաշի սահմանների մօտ՝ անուանում է Շեհերլիք, որի մասին զէյթունցիները աւանդաբար պատմում են, իբր Զէյթունի կազմութիւնից շատ առաջ այդտեղ հաստատուած էր մի մեծ քաղաք, որ օտար թռչնամիներից այրուել և աւերակ է դարձել: Ներկայումս կատարուած պեղումներից երեան են գալիս պարիսպներ, տաշուած ու յղկուած քարէ մեծ սիւներ, զանազան ձեերով քանդակուած քարեր և այլն: Յայտնի չեղաւ ինձ, թէ ինչ ժամանակի կամ ազգի էին պատկանում: Հաւանական է, որ XII-րդ դարում յիշատակուած Անեն^{*)} հաստատուած լինի այստեղ և կամ Ֆէնք գիւղի մօտերք:

Երջապատող տնտեսական հանգամանքների չնորհով մինչև վերջին տարիներս զէյթունցին ապրում էր նահապետական այնպիսի դրութեամբ, ինչպէս դարեր առաջ, տակաւին դրամի գործունէութիւնը չընդհանրացած՝ ապրում էին հին ժողովուրդները: Մինչև մօտաւորապէս քասն տարի առաջ Զէյթունում անշան կերպով գոյութիւն ունէին դրամն ու նրա լրջաբերութիւնը: Երկաթն ու չամիչը կազմում էին երկրի գլխաւոր արդիւնաբերութիւնը: Իսկ վերջին տարիներս երկաթի հանքերը անդորձածելի լինելով, արտադրելի էին միայն խաղողն ու չամիչը, որնք, ինչպէս վերև բացատրուած է, փոխանակելով հարեան գիւղերի միւս արդիւնաբերութեան հետ, զէյթունցիները հայթայթում էին իրանց կեանքի պէտքերը:

Հ.

^{*)}—ՏԵ՛Ս «ՍԻՄՊՈՆԻ» 64 և 196 ԵՐԵԱՆԵՐԸ: